Բայց հիշում էր Արարատյան բարելից երկիրը և հոգոց էր հանում: Իրոք բարելից էր Արարատյան երկիրը՝ ծառերով ու տնկիներով, պտուղներով ու սերմերով, ծաղիկներով ու բույսերով, լեռներով ու դաշտերով, գետերով ու աղբյուրներով, այգեստաններով ու պարտեզներով, թռչուններով ու չորքոտանիներով, երեներով ու որսերով և ամեն բարիքներով լի ու առատ: Այս ամենը մտքով անց էր կացնում Նաջաֆ խանը՝ զբոսանքի տեղերը, ամեն վայրերը հիշում ու գովում էր: Այդ պատճառով գովաբանները ողբեր երգեցին նրա Երևանից հեռանալու, հեռու աշխարհ պանդխտելու, անբարելից և նվաստ երկրում բնակվելու մասին:

ԳԼՈՒԽ ԼԵ
ՀԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Սա՝ այս երանելի մեր հայրը և պատվական հայրապետ Հակոբը, Սպահանից էր, Ջուղա գյուղաքաղաքից, բարեպաշտ որդի էր, աշակերտեց կեսարացի Խաչատուր վարդապետին, որ Ջուղայի առաջնորդն էր: Նրանից սովորեց առաքինի վարք և Աստվածաշնչի բոլոր գիտությունները. եղավ կուսակրոն քահանա: Խաչատուր վարդապետի մահից հետո եկավ Սուրբ Էջմիածին, և Փիլիպոս կաթողիկոսը նրան վարդապետության կարգ տվեց ու առաքեց Հունաստան նվիրակության: Այնտեղից վերադարձավ, եկավ Սուրբ Էջմիածին: Կաթողիկոսը նրան նշանակեց աթոռակալ ու կարգադրիչ: Երկար ժամանակ մնաց այդ գործին՝ հմուտ կառավարելով հոգևոր ու մարմնավոր կարգուսարքը: Երկար ժամանակ Էջմիածնում մնալուց հետո նա գնաց Սուրբ Նախավկայի վանքը, որ Շամբի Ձորագեղում է և քանդելով հին խարխլված եկեղեցին, շինեց գեղեցիկ հորինվածքով: Շինեց նաև պարիսպը, խոհանոցը, խցերը և ավարտեց: Մինչդեռ նա այնտեղ՝ Սուրբ Նախավկայի վանքում էր, մեռավ Փիլիպոս կաթողիկոսը Սուրբ Էջմիածնում 1104 (1655) թվին: Սուրհանդակ ուղարկեցին և նրան բերելով կաթողիկոս օրհնեցին Ծաղկազարդի կիրակի օրը: Այնուհետև նա սկիզբ դրեց բարեգործության. բազմացրեց Սուրբ աթոռի միաբաններին, ավարտեց զանգակատան շինությունը: Շրջում էր վանքերում և ինչ պա-

կասություն տեսնում էր վանքերում, թե հոգևոր, թե մարմնավոր, պահանջները լրացնում էր: Հաստատեց, որ ամեն տարի վանքի տասը լիտր ձեթ տան եկեղեցում վառելու համար: Եվս քսան լիտր գինի՝ երթևեկողների կարիքների համար: Ապա գնաց Սպահան ի տեսություն փոքր Շահ Աբասին, որպեսզի հրաման ստանա իր կաթողիկոսության համար:

Նախ տեսավ իշխանաց իշխանին՝ որին Էհտիմալ Դոլվաթ (եպարքոս) են կոչում, հայտնեց նրան իր մտադրությունը: Իշխանը ասաց, որ օրը որ կհայտնեմ քեզ, կգաս: Գնաց պատրաստեց պատշաճավոր աղերսագիր և երեք հարյուր ոսկի ըստ առաջին կաթողիկոսների սահմանումի: Գրեց նաև մաղթանագիր, որ կոչվում է արզա: Եվ սպասում էր ուշադրությամբ, մեծ հույսով աղոթելով առ Աստված գործի հաջողության համար:

Եվ մի օր՝ չորեքշաբթի եկավ հրավիրակը նրան (հայտնելու), որ գնա արքունի հրավերին: Կանչվեց նրա առջև, հանձնեց աղերսագիրը: Արքան նայելով նրան՝ ասաց՝ դու մահմեդակա՞ն ես, թե՞ կռապաշտ: Կաթողիկոսն ասաց՝ Աստված մի՛ արասցե, կռապաշտ չեմ, սակայն մահմեդական էլ չեմ: Շահը հարցրեց՝ ապա ի՞նչ ես: Կաթողիկոսը ասաց՝ քրիստոնյա եմ: Շահը հարցրեց՝ դուք Քրիստոսին ի՞նչ եք կոչում: Կաթողիկոսը պատասխանեց՝ ինչ որ մարգարեներն են գրել, մենք նրանց խոսքին ենք հավատարիմ, թե բարի է, նրանք վարձ կառնեն, թե չար է, նրանք կպատժվեն: Շահն ասաց՝ դուք Քրիստոսին Աստվա՞ծ եք ասում: Կաթողիկոսն ասում է՝ այո: Իսկ մահմեդականները սպասում էին, թե ահա պատառպատառ է անելու նրան, քանզի ինչպես Սողոմոնն է ասում, թե թագավորների սրտերը Աստծու ձեռքում են:

Ինքը՝ շահը երեսը դարձրեց դեպի մեծամեծները և պարսկերեն ասաց, թե մենք էլ ենք նրան Աստված կոչում, ի՞նչ վնաս կա: Ապա կաթողիկոսին հրամայեց և ասաց՝ նստիր, խալիֆա: Եվ որովհետև պարսկերեն գիտեր, երբ լսեց շահի խոսքը, խիստ ուրախացավ: Շահն ասաց կաթողիկոսին՝ պատմիր մարգարեների վկայությունները Քրիստոսի մասին: Ապա կաթողիկոսը սկսեց պատմել՝ սկսելով Մովսեսից մինչև Քրիստոս ամբողջը մեկնաբանել: Լսում էին նաև մեծամեծները, ինչ կաթողիկոսը պատմում էր: Երբ ավարտեց, շահն ասաց՝ ահա սա վկայաբերում է մարգարեներին, այս առիթով